ՇԵՆԳԱՎԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ

Շենգավթյան մշակույթը մ. թ. ա. IV–III հազ. տարածվելով մոտ 0,5 մլն քառ. կմ տարածքով և դրսևորելով արտահայտաձևերի ու եղանակների մեծ բազմազանություն, մի նոր շրջափուլ հանդիսացավ Հայկական լեռնաշխարհի բնակչության կյանքում: Մշակույթի տարածման տիրույթում (Պաղեստինից՝ Հյուսիսային Կովկաս և Իրանից՝ Տավրոսյան լեռներ) արձանագրված է ավելի քան 600 բնակատեղի: Նշված ժամանակաշրջանում ձևավորվում է բնակավայրերի հիերարխիա, ընդ որում զատվում են յուրատեսակ «գավառական կենտրոններ», որոնք շրջապատված էին արբանյակ բնակավայրերով (Էլառ, Արևիկ, Մոխրաբլուր, Ղարաքյոփեկթեփե և այլն), իսկ երբեմն նաև ամրացված բնակավայրերով: Խոշոր բնակավայրերը հաճախ ունեին ամրաշինական կայուն համակարգ՝ պարիսպներ, աշտարակներ, որմնահեծեր, ստորգետնյա անցումներ (Շենգավիթ, Մոխրաբլուր, Էլառ, Յանիկ-թեփե, Նորշունթեփե և այլն)[1]:

Շենգավթյան մշակույթի բնակավայրերը բնորոշվում են նաև զարգացած տնտեսական կյանքով: Իհայտ են գալիս ինչպես առանձին արհեստանոցներ, այնպես էլ արհեստագործական թաղամասեր, գյուղատնտեսական մթերքի կուտակման և վերամշակման կենտրոններ (Շենգավիթ, Էլառ, Ասլանթեփե, Լոռուտ, Բաբա Դերվիշ և այլն): Հայտնի են նաև մասնագիտացված բնակավայրեր (Ֆիոլետովո)[2]: Նշված ժամանակաշրջանում ակտիվանում են նաև առևտուրն ու տարածաշրջանային կապերը, ընդ որում, ոչ միայն շենգավթյան մշակույթի տարածման տիրույթում, այլև այլ տարածաշրջանների հետ[3]: Լուրջ տեղաշարժեր են արձանագրվում նաև բնակչության սոցիալական կյանքում, ինչի մասին վկայում են բնակատեղիների պեղումների ժամանակ հայտնաբերված կնիքները (Թաշքուն Մնքիի, Նորշունթեփե, Ասլանթեփե, Ժինվալի): Հանդես են գալիս պալատական բնույթի շինություններ (Ասլանթեփե, Նորշունթեփե): Քաղաքաշինության մեջ նահապետական մեծ ընտանիքի համար նախատեսված կացա-

---

[1] *Հ. Սիմոնյան, Ա. Գնունի. Հայաստանի սոցիալ-քաղաքական իրավիճակը վաղ բրոնզի դարում.– «Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան», Երևան, 2004, էջ 62–63, Հ. Սիմոնյան. Խորենիա.– «Կերոն 2002», Ջավախքյան գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 65–74:*

[2] А. Геворкян, А. Пальмиери. Фиолетово.– *«Հայաստանի հնագույն մշակույթը», պր. 3, Երևան, 2001, էջ 11–13:*

[3] *Հ. Սիմոնյան, Ա. Գնունի. նշվ. աշխ., էջ 63,* А. Геворкян. Торговля металлом в раннем бронзовом веке в Армении.– *«Հին Հայաստանի մշակույթը», պր. XIII, Երևան, 2005, էջ 6–7:*

բաների հետ մեկտեղ հանդես են գալիս զույգային ընտանիքների մեկուսի կանգնած կացարաններ[4]*:*

Բնական է, որ սոցիալական և տնտեսական նման զարգացած համակարգ ունեցող հասարակությունը պետք է որոշակի պահանջներ ներկայացներ պաշտամունքի կազմակերպմանը: Վաղ բրոնզե դարում ծեսն իրականացվում էր ինչպես բնակարանային համալիրներում, այնպես էլ հատուկ նախատեսված վայրերում:

Բնակելի համալիրներում տեղադրված սրբավայրերը և ծիսական անկյուններ: *Պաշտամունքային գործողությունները կարող էին իրականացվել ինչպես նահապետական մեծ ընտանիքի բնակելի համալիրի կենտրոնական կառույցում, այնպես էլ առանձին ընտանիքներին պատկանող կացարաններում, ինչպես նաև մեկուսի կանգնած բնակարաններում:*

Ա) Կենտրոնական կացարանում տեղադրված սրբավայրեր*: Սովորաբար նման կառույցներն իրենց հատակագծով տարբերվում են համալիրի այլ կացարաններից: Այդպիսի կացարան-սրբավայրերի թվին կարելի է դասել Շենգավթի թիվ 1–3 կացարանները (1936–1937 թթ. պեղումներ), թիվ 2 և 4 կացարանները (1958 թ. պեղումներ), թիվ 1 կացարանը (1971 թ. պեղումներ), թիվ 1 կացարանը (1979 թ. պեղումներ) և թիվ 3 կացարանը (1981 թ. պեղումներ), Քյուլ-թեփեի VII հորիզոնի թիվ 12 կառույցը*[5]*: Ծիսական գործողություններ իրականացվում էին նաև (դատելով կենտրոնական ծիսական օջախից) Ղարաքյոփեկթեփեի համալիրներից մեկում*[6]*: Հատկանշական է, որ նշված բոլոր կառույցներն ունեն կլոր հատակագիծ, այն ժամանակ, երբ շրջապատող կացարանները քառանկյուն են: Ըստ Գ. Միրցխուլավայի, պաշտամունքային գործառույթներ ուներ նաև Սամշվիլդեի բնակարանային համալիրի կենտրոնական հատակագծում կիսակլոր կառույցը: Կիսակլոր հատակագիծ ունեցող կառույց հայտնաբերված է նաև Շենգավթում (1964 թ. պեղումների կենտրոնական կացարան)*[7]*: Հատկանշական է, որ Սամշվիլդեի կենտրոնական կառույցը հիմքում ուներ համակենտրոն շրջաններ: Բացառված չէ, որ շինարարական այս տեխնիկան, որը հատուկ է շենգավթյան մշակույթի զարգացման վաղ փուլերին (Մոխրաբլուրի թիվ 42 կացարան, Նորաբաց), հետզհետե մարելով, շարունակում է գոյատևել պաշտամունքային կառույցներում: Համակենտրոն շրջաններ ընկած են նաև Ալի Բայրամլիի «հասարակական կառույցի», Քիրբեթ Քերակի պաշտամունքային կա-*

---

[4] *Հ. Սիմոնյան, Ա. Գնունի. նշվ. աշխ, էջ 64, Ս. Հ. Սարդարյան. Հայաստանը քաղաքակրթության օրրան. Երևան, 2005, էջ 280-304:*

[5] *Ս. Հ. Սարդարյան. նշվ. աշխ., էջ 280, 284, 286-287, 300-302,* Е. А. Байбуртян Последовательность развития древнейших культур Армении (рукопись).– “Архив Государственного исторического музея Армении”, папка №2, с. 34-35; Е. А. Байбуртян. Культовый очаг из Шенгавитского поселения.– “Вестник древней истории”, 1938, №4, с. 255-259.

[6] Д. А. Ахундов. Архитектура древнего и раннесредневекового Азербайджана. Баку, 1986, с. 55.

[7] Г. И. Мирцхулава. Самшвилде. Тбилиси, 1975, с. 71; *Ս. Հ. Սարդարյան. նշվ. աշխ., էջ 295:*

ռույցի հիմքում[8]: Համակենտրոն շրջաններ են ընկած նաև Խիզաննանթ Գորայի D հորիզոնի թիվ 19 կացարանում[9]: Նահապետական մեծ ընտանիքի բնակելի համալիրի կենտրոնական կացարանը Կ. Քուշնարյովայի կողմից համարվում է սրբավայր[10]: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ նմանատիպ կացարաններն ընկալվում էին ոչ միայն որպես սրբավայր, այլ մի վայր, որտեղ կենտրոնանում էր նահապետական մեծ ընտանիքի տնտեսական, արտադրական և հասարակական ողջ գործունեությունը, ինչի մասին են վկայում աղորիքները, մետաղյա իրերի կաղապարները, որոնք հայտնաբերված են կլոր կացարաններում (Շենգավիթ, Քյուլ-թեփե և այլն):

Բ) Բնակելի համալիրների ոչ կենտրոնական կառույցներում և մեկուսի կանգնած կացարաններում տեղադրված պաշտամունքային անկյուններ: *Պաշտամունքային անկյուններ և հատվածներ հայտնաբերված են նաև բազմասենյականոց համալիրների բնակելի, ինչպես նաև մեկուսի կանգնած կացարաններում: Պաշտամունքային գործողությունները կարող էին կատարվել ինչպես կացարանի կենտրոնում, այնպես էլ հատուկ ծիսական անկյուններում: Կացարանի կենտրոնում ծիսական օբյեկտներ (օջախ, զոհարան-հենակ, արձանիկներ) հայտնաբերված են Շենգավթում (1962 թ. պեղումների թիվ 1 կլոր կացարանին կից թիվ 2 քառանկյուն կառույցը), Կառնուտում, Բերիկլդեերիում, Բաբա Դերվիշում, Շիրակավանում, Քյուլ-թեփեում (X հորիզոնի թիվ 7 շինություն), Էլառում[11]: Բնակարանի կենտրոնական հատվածում օջախները տեղադրված էին նաև Կվացխելերիում և Խիզաննանթ Գորայում[12]:*

Պաշտամունքային անկյուններ հաստատագրված են Քոսի Ճոթերում (հյուսիս-արևելյան անկյուն), Սղնախների թիվ 1 և 2 կացարաններում, Թաբարրա էլ Աքրադում, Հան Իբրահիմ Շահի VIII հորիզոնում, Նորշունթեփեի VIII հորիզոնում, Ցիխիա Գորայում[13]:

---

[8] *Հայկական ճարտարապետության պատմություն. հ. I, Երևան, 1996, էջ 36;* C h. B u r n e y. Circular Buildings at Yanik Tepe, in North West Iran.– “Antiquity”, vol. 35, №135, Cambridge, 1960, p. 238; Д. А. А х у н д о в. *Նշվ. աշխ., էջ 80;* A. G. S a g o n a. The Caucasus Region in the Early Bronze Age. P. I, Oxford. 1982, p. 84-85.

[9] А. И. Д ж а в а х и ш в и л и. Строительное дело и архитектура поселений Южного Кавказа. Тбилиси, 1975, с. 135.

[10] К. Х. К у ш н а р е в а. Южный Кавказ в IX-II тыс. до н. э. СПб., 1993, с. 56.

[11] *Ս. Հ. Ս ա ր դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 296,* Р. С. Б а д а л я н. Зооморфные очажные подставки эпохи ранней бронзы из Карнута.– “Вестник общественных наук” (*այսուհետ* ՝ Вестник), 1985, №8, с. 96; Л. И. Г л о н т и, А. И. Д ж а в а х и ш в и л и. Новые данные о многослойном памятнике эпохи энеолита-поздней бронзы в Шида Картли - Бериклдееби.– “Краткие сообщения Института археологии АН СССР” ((*այսուհետ* ՝ КСИА), вып. 192, М., 1987, с. 82; *Ռ. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Խ ն կ ի կ յ ա ն, Լ. Պ ե տ ր ո ս յ ա ն. Հին Շիրակավան. Երևան, 2002, էջ 9,* Е. А. Б а й б у р т я н. Последовательность..., с. 54-55; О. А. А б и б у л а е в. Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1982, с. 96; И. Г. Н а р и м а н о в. Первый и второй холмы Баба Дервиша.— “Dziebani”, vol. VI, Tbilisi, 2001, p. 64.

[12] А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 120, 133-138:*

[13] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազ., Երևան, 1967, էջ 22;* Л. П е т р о с я н. Древние памятники Кети и Воскеаска. Ереван, 1980 с. 14, 21; S. H o o d. Excavations at Tabarra el Akrad.– “Anatolian Studies” (*այսուհետև* ՝AS), vol. I, London, 1951, p 123; M. K e l l y - B u c c e l a t i. The Outer Fertile Culture: North Eastern Connections of Syria and Palestine in

Կացարանների ծիսական հարդարանքը: *Նշված կառույցներում պաշտամունքային կարևորագույն բաղադրատարրն էր ծիսական օջախը, որի շուրջը կենտրոնանում էր նահապետական մեծ ընտանիքի պաշտամունքային և արտադրական ողջ գործունեությունը*[14]*: Հատկանշական է, որ որոշ համալիրներում օջախը տեղադրված էր հատուկ պատվանդանի վրա: Այդպիսի երևույթ է դիտարկվում Նորշունթեփեի VIII հորիզոնում, Բաբա Դերվիշում, Պուլուրի XI հորիզոնում*[15]*: Օջախների ծիսական նշանակությունն ընդգծվում էր ոչ միայն դրանց դիրքով, այլև հարևանությամբ գտնվող զոհարան-հենակների առկայությամբ: Զոհարան-հենակներն օգտագործվում էին նաև տնտեսական օջախների շուրջը կատարվող ծիսական գործողությունների ընթացքում: Ամենայն հավանականությամբ, օջախը և հենակը կազմում էին ծիսական որոշակի միասնություն: Այսպես, օջախին տեղադրված ընդգծված առնանդամներով եղջրավոր տղամարդկանց պատկերող հենակները կարող էին պատկերել ընտանեկան օջախը բեղմնավորող տղամարդուն, ընդ որում, օջախը նույնացվում էր կնոջ հետ*[16]*: Օջախ-հենակ կապը հավաստված է Կառնուտում, Շիրակավանում, Շենգավթի 1937 թ. հայտնաբերված կառույցներից մեկում, 1958 թ. պեղված թիվ 4 կացարանում, Քյուլ-թեփեի X հորիզոնի թիվ 7 կառույցում, Բույուկ-թեփե Հույքում: Կրակարան-հենակ-շարժական հենակ կապը հավաստված է նաև Գառնիում*[17]*: Հարկ է նաև համաձայնվել Ե. Անտոնովայի այն տեսակետին, որ օջախ-հենակ միասնության մեջ կարող էր ներառվել նաև օջախին տեղադրված անոթը կամ օջախի վրա տապակվող միսը: Այսպես, Բաբա Դերվիշում օջախի*

---

the Third Millennium B.C.– "Ugariy", № 11, 1979, p. 421-422; З. Э. Махарадзе. Поселение Цихиагора и проблема периодизации раннеземледельческих культур на территории Грузии.– В сб. "Между Азией и Европой. Кавказ в VI–I тыс. до н. э." СПб., 1996, с. 73; H. Hauptman. Norrsuntepe 1974.– AS, vol. XXV, London, 1975, p. 36; H. Ertem. Han Iibrahim Sah Excavations 1971.– In: "Keban project activities 1971" (*այսուհետ* 'Keban), Ankara, 1973, p. 64.

[14] *Բնակարանային համալիրներում օջախների և դրանց համալիրների ծիսական գործառույթների մասին մանրամասն տես* 'Н. Шаншашвили. Происхождение и функции очажных подставок куро-араксской культуры.– "Археология, этнология и фольклористика Кавказа". Св. Эчмиадзин, 2003, с. 73; Е. А. Байбуртян. Культовый очаг...; С. А. Есаян. Скульптура древней Армении. Ереван, 1981; T. Takaoglu. Hearth Structures in the Religion Pattern of Early Bronze Age Northeast Anatolia.– AS, vol. L, London, 2000, p. 11-16; Р. С. Бадалян. Зооморфные очажные подставки..., с. 95; *Ա. Գնունի. Շենգավթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները.– ՊԲՀ, 2004, № 1, էջ 203-223:*

[15] H. Hauptman. *Նշվ. աշխ., էջ 35-36;* A. G. Sagona. *Նշվ. աշխ., էջ 70;* Г. С. Исмаилов. Археологическое исследование древнего поселения Баба-Дервиш. Баку, 1977, с. 17.

[16] Т. Н. Чубинишвили. К древней истории Южного Кавказа. Тбилиси, 1971 с. 68; *Ս. Ա. Եսայան. Հայաստանի հնագիտությունը. Երևան, 1991, էջ 160:*

[17] Р. С. Бадалян. Зооморфные очажные подставки..., с. 96*;* Е. А. Байбуртян. Последовательность..., с. 35; О. А. Абибулаев. *Նշվ. աշխ., էջ 95; Ս. Հ. Սարդարյան. նշվ. աշխ., էջ 284, Ռ. Թորոսյան, Օ. Խնկիկյան, Լ. Պետրոսյան. նշվ. աշխ.,, էջ 9,* A. Sagona, E. Pemberton, I. McPhee. Excavations at Boyuktepe Hoyuk 1992 Third Preliminary Report.– AS, vol. XLLIII, London, 1993, p. 70-71; *Է. Վ. Խանզադյան. Գառնի IV. Երևան, 1969, էջ 15:*

վրա հենակից բացի, տեղադրված էր նաև անոթ[18]: Օջախների և օջախային հենակների ձևերի ու քանդակների բազմազանությունը թույլ են տալիս տարբերակել դրանց երեք հիմնական գործառույթներ. ա) օջախները հանդիսանում էին նախնիների պաշտամունքի վայր, բ) ծառայում էին պահպանիչ ողջերի համար, գ) խորհրդանշում էին տոհմի հարստությունը, հարատևությունը, առողջ սերունդը, բարեկեցությունը[19]:

Բնակարանային համալիրների ծիսական հարդարանքի կարևոր բաղադրատարրերից էին մարդակերպ, կենդանակերպ և առնանդամանման արձանները: Կուռքերը կարող էին մեկուսի տեղադրված լինել կացարաններում (երբեմն հատուկ հարթակների վրա) կամ զուգորդված լինեն օջախային համալիրների հետ: Կացարաններում մեկուսի կանգնած կուռքեր հայտնաբերված են Սղնախների թիվ 1 կացարանի անկյունում, Հառիճի III դարավանդի կացարաններից մեկում: Ընդ որում, ըստ Տ. Խաչատրյանի, կուռքի դեպի ներքև նեղացող ծայրերը հուշում են, որ այն կարող էր տեղադրված լինել դրոցի վրա[20]: Նմանատիպ կուռքեր հայտնաբերված են նաև Ջրահովտից և Այգեվանից[21]: Պատվանդանին դրված արձանիկ հայտնաբերված է Շենգավթի 1981 թ. պեղումներին հայտնաբերված թիվ 3 կլոր կացարանում[22]:

Բազմաթիվ արձանիկներ հայտնաբերվել են նաև օջախային համալիրներում: Այսպես, արձանիկներ են հայտնաբերված Սղնախների թիվ 2, Քյուլ-թեփեի X հորիզոնի թիվ 7 և I հորիզոնի թիվ 12 կացարաններում, Շենգավթի 1936 թ. պեղումների թիվ 2 կացարանի ստորին հորիզոնում, ինչպես նաև Քոսի ճոթերում[23]:

Հայտնաբերված քանդակներն ինչպես մարդակերպ են (տղամարդ և կին պատկերող), այնպես էլ կենդանակերպ և առնանդամանման: Կանացի արձանիկներ են հայտնաբերվել Շենգավթում, Հառիճում, Սղնախներում, Քյուլ-թեփեում[24]: Շենգավթյան մշակույթի բնակավայրերում հայտնաբերված կանացի արձանիկները, ամենայն հավանականությամբ, պատկերում էին պտղաբերությունը խորհրդանշող Մեծ Մորը: Մեծ Մայրը կարող էր կատարել նաև ընտանի-

---

[18] Е. С. А н т о н о в а. Первые святилища Армянского нагорья.– В кн.: “Междисциплинарные исследования культурогенеза и этногенеза Армянского нагорья и сопредельных областей”. Ереван, 1990, с. 53; И. Г. Н а р и м а н о в. Первый и второй холмы Баба Дервиша, с. 64.

[19] *Ա. Գ ն ո ւ ն ի. Շենգավթյան մշակույթի օջախները..., էջ 220:*

[20] Л. П е т р о с я н. Раскопки памятников..., с. 21; Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака. Ереван, 1974, с. 35, 75.

[21] С. А. Е с а я н. Скульптура..., с. 11.

[22] *Ս. Հ. Ս ա ր դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 301-302:*

[23] Л. П е т р о с я н. Раскопки памятников..., с. 21; О. А. А б и б у л а е в. *Նշվ. աշխ., էջ 93-95,* Е. А. Б а й б у р т я н. Культовый очаг..., с. 259; Е. А. Б а й б у р т я н. Последовательность..., с. 24; Э. В. Х а н з а д я н. Энеолитическое поселение близ Кировакана.– “Советская археология” (*այսուհետ՝* СА), 1969, №4, с. 160.

[24] *Տես՝* С. А. Е с а я н. Скульптура…, таб. *1;* Т. С. Х а ч а т р я н. *Նշվ. աշխ., էջ 75,* Л. А. П е т р о с я н. *Նշվ. աշխ., էջ 21, Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Շենգավթի 2000 թ. պեղումները.– «Հայաստանի հնագույն մշակույթը», էջ 34:*

քի պահապանի ծիսական գործառույթները: Այս վարկածը ապացուցում է նաև Պուլուրում գտնված երեխաների հետ կնոջը պատկերող զոհարանը[25]:

Տղամարդու արձաններ են հայտնաբերվել Շենգավթից, Կվացխելեբիից, Բաբա Դերվիշից[26]: Բնակարանային կառույցներում հայտնաբերված արձանիկների թվում իրենց ուրույն տեղն ունեն առնանդամանման արձանները: Վերջիններիս ի հայտ գալը վկայում է համայնքի կյանքում տղամարդու դերի բարձրացման մասին: Միաժամանակ ֆալոսի պաշտամունքը կապված է մի շարք ծեսերի, այդ թվում պտղաբերության ծեսերի, ինչպես նաև նախնիների պաշտամունքի հետ:

Արձանների հաջորդ խումբն են կազմում կենդանակերպ արձանիկները. կատու (Շենգավիթ), խոյ (Մոխրաբլուր, Շենգավիթ, Ամիրանիս-Գորա, Ջրահովիտ, Ամասիա), ցուլ (Շենգավիթ, Մոխրաբլուր), ձի (Շենգավիթ), այծ (Քյուլ-թեփե), թռչուն (Հառիճ), խոզ (Մոխրաբլուր, Բեշտաշեն)[27]:

Քանդակների մեջ իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում Ցիխիա-Գորայում հայտնաբերված Արեգակի պատկերով սկավառակը[28]:

Անկասկած, ծիսական նշանակություն ունեին նաև բնակավայրերում հայտնաբերված ակի մոդելները:

Օջախների հարևանությամբ հաճախ հայտնաբերվում են կենցաղային իրեր (աղորիքներ, իլիկի գլուխներ և այլն), որոնք թեպետ կարող էին օգտագործվել ծիսական որոշ արարողությունների ժամանակ, սակայն առավել հավանական է, որ հիմնականում ունեին կիրառական նշանակություն:

Կացարանների ծիսական հարդարանքի կարևոր բաղադրատարրերից են նաև ծիսական ածուխի կուտակման համար նախատեսված հորերը: Ընդսմին, նմանատիպ հորերում մոխրի հետ մեկտեղ սովորաբար գտնվում են օջախների հենակների բեկորներ, ինչպես նաև արձանիկներ: Կացարանների ներսում սրբազան մոխիրը կարող էր կուտակվել ինչպես կավածեփ հորերում (Մգաղիջվարի, Խիզաննանթ-Գորայի Ե հորիզոն, Ամիրանիս-Գորայի XIII, Նորշունթեփեի XVII հորիզոնի թիվ 7 և VII հորիզոնի թիվ 17 կացարաններ), այնպես էլ հատուկ անոթներում (Գառնի)[29]:

---

[25] T. T a k a o g l u. *Նշվ աշխ., աղ. 2 (c).*

[26] *Ս. Հ. Ս ա ր դ ա ր յ ա ն. Հայաստանը..., նկ. 52, 54 (3),* Т. Н. Ч у б и н и ш в и л и. *Նշվ աշխ., էջ 92;* Г. С. И с м а и л о в. Археологическое исследование, с. *59.*

[27] Б. Б. П и о т р о в с к и й. Поселения медного века Армении.– СА, т. XI, М., 1949, с. 175; Б. А. К у ф т и н. Раскопки в Триалети, Тбилиси, 1941, с. 109-110; О. А. А б и б у л а е в, *Նշվ աշխ., էջ 94,* С. А. Е с а я н. Скульптура..., таб. 6-7; *Ս. Հ. Ս ա ր դ ա ր յ ա ն. Հայաստանը..., աղ. LXXXVII:*

[28] Г. Г. Ц к и т и ш в и л и, Д. Л. Г в е т а д з е, Р. М. К в и т а и ш в и л и, З. Э. М а х а р а д з е, Л. С. К а з а х и ш в и л и. Экспедиция Каспского района.– “Полевые археологические исследования в Грузии (*այսուհետ* ` ПАИ) в 1986 г.”, Тбилиси, 1991, с. 66.

[29] Л. Ц и т к а д з е, Т. К и г у р а д з е, М. М е н а б д е, Н. М и р ц х у л а в а. Раскопки жилого холма в с. Мгадиджвари.– ПАИ, 1976, Тбилиси, 1979, с. 88; Я. И. К и к в и д з е. Земледелие и земледельческий культ в древней Грузии. Тбилиси, 1976, с. 49; Т. Н. Ч у б и н и ш в и л и. К древней истории..., с. 65; A. S c h a h n e r. Von der Rundhutte zum Kaufmannhaus Kulturhistorische Untersuchungen zur Entwicklung prahistoeischer Wohnhaus in Zentral-, Ost- und Sudostanatolien. Oxford, Bd. 1, 1999, S. 182; *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի IV, էջ 13-14:*

Ծիսական հարդարանքի կարևոր տարրերից է հարթակը, որի վրա կարող էին տեղադրված լինել ծիսական նշանակության տարատեսակ իրեր (արձանիկներ, ծիսական խեցեղեն): Նմանատիպ հարթակներ հայտնի են Բերիկլդեեբիից, Բաբա Դերվիշից, Շահլամայից, ինչպես նաև Մոխրաբլուրի III հորիզոնից[30]: Հատկանշական է, որ Մոխրաբլուրում անոթները զարդանախշով ուղղված են դեպի կացարանի մուտքը: Գ. Արեշյանը դա համարում է կացարանի գեղագիտական ընդհանուր ընկալման բաղադրատարր[31]: Պատվանդան-հարթակ է տեղադրված նաև Սագվարջիլե բնակավայրում: Ընդսմին, պատվանդանի վրա տեղադրված էր ցլի եղջյուր[32]: Հարթակներ հաստատագրված են նաև Ասլանթեփեի B1 հորիզոնի VIII և IX, D1 հորիզոնի E-I և Q, Պուլուրի X թիվ 14 ու IX հորիզոնի թիվ 26 կացարաններում[33]: Նշված փաստերը ցույց են տալիս, որ ծիսական արարողությունները կարող էին կատարվել կացարանի ցանկացած հատվածում:

Կացարաններում տեղադրված սրբավայրերի թվում հարկ է նշել նաև Նորշունթեփեի VIII և VII հորիզոններում հայտնաբերված պալատական համալիրի հյուսիսային հատվածում գտնվող շինությունը՝ օջախների ռելիեֆ զարդանախշով[34]:

Վաղ բրոնզի դարաշրջանի որոշ բնակավայրերում հաստատագրված է կացարանների տակ թաղումներ կատարելու ծեսը: Օջախի տակ թաղում հայտնաբերված է Օրծկլեբիում: Մանկան թաղում է հայտնաբերված նաև Կոդա բնակավայրի թիվ 2 կացարանում: Մանկան այրված ոսկորներ են հայտնաբերված Սմիրանիս-Գորայի I շինարարական հորիզոնի XIII կացարանում[35]: Բ. Կուֆտի-

---

[30] Л. И. Глонти, А. И. Джавахишвили. Новые данные..., с. 85; С. А. Есаян. Древняя культура племен северо-восточной Армении. Ереван, 1974 с. 24; Г. Е. Арешян. Искусство куро-араксской культуры.– “Материалы II Международного симпозиума по армянскому искусству” (отдельный оттиск), Ереван, 1978, с. 5.

[31] Г. Е. Арешян. Искусство..., с. 5. *Դեկորատիվ արվեստի նմուշների ստեղծումը կարող էր թելադրվել ինչպես զուտ էսթետիկական, այնպես էլ այլ կարգի մղումներով: Վերջիններիս թվին է պատկանում հմայությունը: Հարկ է նաև համաձայնել Ա. Պերշիցի այն տեսակետին, որ նախնադարի քայքայման փուլում արվեստի նշված գործերում հանդես են գալիս այնպիսիք, որոնք արտացոլում են ժամանակաշրջանի արմատական սոցիալ-քաղաքական փոփոխությունները. տե՛ս* История первобытного общества. Т. 3. Эпоха классообразования. М., 1988, с. 381 (*գրքի այս գլուխը գրվել է Ա. Պերշիցի կողմից*): *Միևնույն ժամանակ պետք է նշել այն հետազոտողների կարծիքը, ըստ որի կացարանի ձևավորումը պետք է ընկալվի որպես զուտ ծիսական հարդարանքի էլեմենտ՝* А. Яффе. Символы в изобразительном искусстве.– В кн.: К. Г. Юнг, М.-Л. фон Франц, Дж. Л. Хендерсон, И. Якоби, А. Яффе. Человек и его символы. М., 1998, с. 231-232. *Ըստ Վ. Աֆանասևայի, այն ժամանակվա ողջ արվեստը պարուրված էր ծեսով. տե՛ս* История древнего мира. Т. 1. Ранняя древность (*այսուհետ՝* Ранняя древность), М., 1989, с. 113 (*գլուխը գրվել է Վ. Աֆանասևայի կողմից*):

[32] Л. Д. Небиеридзе. Культовые ритуалы (по материалам пещеры Сагварджиле).– “Дзиебани”, №3, Тбилиси, 1999, с. 12.

[33] A. Schachner. *Նշվ. աշխ., էջ 122, 144, 185.*

[34] H. Hauptman. Norsuntepe 1973, p. 43-44; H. Hauptman. Norsuntepe 1974, p. 43-44.

[35] К. Кахиани, Э. Гвигвишвили, М. Дзенекадзе, Г. Каланадзе, З. Цквитинидзе. Археологические исследования Машаверского ущелья.– ПАИ, 1986, с. 55; Т. Н. Чубинишвили. *Նշվ. աշխ., էջ.* 65;

նը նշում է, որ Օզնիում կացարանների պատի տակ հայտնաբերված են մանկան թաղումներ[36]: Կացարանների և այլ կառույցների հատակի կամ պատերի տակ կատարված թաղումները կարող էին ունենալ պահպանիչ նշանակություն: Դա հաստատվում է նմանատիպ գոհաբերությունների մասին վկայություններով, որոնք պահպանվել են տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ, ինչպես նաև ազգագրական նյութերում[37]: Հատկանշական է նաև Ե. Բայբուրդյանի այն վկայությունը, որ Էլառի կացարաններից մեկում օջախի հարևանությամբ հայտնաբերված է գառան ամբողջական կմախք[38]:

Նշված փաստերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ կացարանում էին կենտրոնացած ընտանեկան ծեսի շատ բաղադրատարրեր (նախնիների պաշտամունք, պահպանիչ աղոթքներ, սերնդի բարօրությանն ուղղված ծիսական գործողություններ), չեն բացառում, որ իբրև սրբագործված տարածք կարող էր ընկալվել ոչ միայն կացարանի այս կամ այն անկյունը, այլ ողջ կացարանը: Այս վարկածը հաստատվում է ազգագրական նյութով[39]: Կացարանը սրբագործվում էր նաև բազմաթիվ հին ժողովուրդների մոտ: Այսպես, էտրուսկյան կացարանն իր կառուցվածքով նմանվում էր տաճարի: Ա. Նագովիցինը նշում է, որ բնակելի կացարանին հատուկ է տաճարին բնորոշ եռամասնությունը, որը միավորում է անդրշիրիմյան, ողջերի և աստվածների աշխարհները[40]: Էտրուսկյան և հռոմեական պանթեոններում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում կացարանի հովանավոր՝ պենատները: Ընդ որում, ի տարբերություն ընտանիքի հովանավոր լարերի՝ բնակության նոր վայր տեղափոխվելիս պենատները մնում էին նախկին վայրում[41]: Ի դեպ, պետք է նշել, որ Կ. Բլեգենը Տրոյա I-ի և Կիկլադյան արշիպելագի բնակատեղիների պեղումների ժամանակ կացարաններում հայտնաբերված արձանիկները համարում է լարեր և պենատներ[42]: Բաբելոնում տան շեմի տակ, չորս անկյուններում, կենտրոնում և տանտիրոջ մահճակալի մոտ հատակի տակ պահվում էին պահպանիչ ոգիների՝ «յոթ իմաստունների» արձանիկները[43]: Կացարանի պաշտամունքի մասին են վկայում տան տեսք ունեցող աճյունասափորները, ինչպես նաև Հռոմի Ֆորումի ստորին հորիզոնի GG թաղման մեջ հայտնաբերված կացարանի մանրակերտը[44]: Կացարանների

Г. Г. П х а к а д з е. Раскопки в с. Кода.– В кн: Археологические открытия (*այսուհետ՝* АО) в 1971, М., 1972, с. 452-453.

[36] Т. Н. Ч у б и н и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 79:*

[37] Курдские народные сказки, М., 1989, с. 82-83; *Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 219-220; Վ. Պ ե տ ո յ ա ն. Սասնա ազգագրությունը. Երևան, 1975, էջ 25-28,* Э. Б. Т е й л о р. Первобытная культура. М., 1989, с. 85-89; *Ե. Լ ա լ ա յ ա ն. Վասպուրական, հավատք.– «Ազգագրական հանդես», գիրք XXV, Թիֆլիս, 1913, № 2, էջ 52:*

[38] Е. А. Б а й б у р т я н. Последовательность…, с. 23.

[39] *Դ. Վ ա ր դ ո ւ մ յ ա ն. Հայոց ժողովրդական տունը՝ գլխատուն որպես սրբավայր.– «Հայոց սրբերը և սրբավայրերը». Երևան, 2002, էջ 359-360, Ե. Լ ա լ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 351-352:*

[40] А. И Н а г о в и ц ы н. Религия и мифология этрусков. М., 2000, с. 79-82.

[41] *Նույն տեղում, էջ 380:*

[42] К. Б л е г е н. Троя и троянцы. М., 2004, с. 64.

[43] Э. К л е н г е л ь - Б р а н д т. Путешествие в древний Вавилон. М., 1979, с. 192.

[44] J. R y k w e r t. The Idea of a Town. Cambridge, Mass.– London, 1988, p. 99-105.

սրբագործման մասին է վկայում կացարանի մանրակերտ հանդիսացող ծիսական անոթը՝ հայտնաբերված Մելոս կղզուց[45]: Կացարանի սրբագործման մասին որոշ տվյալներ կան շումերական դիցաբանության մեջ: Այսպես, Գիլգամեշի մասին էպոսում Էնլիլ աստվածը հենց կացարանին է հաղորդում ջրհեղեղի մասին լուրը[46]:

Բնակարանային համալիրներում ծիսական գործառույթները, ամենայն հավանականությամբ, կատարում էր մեծ ընտանիքի նահապետը, ինչի մասին վկայում են գուրզի բեկորների գտածոները Շենգավթի թիվ 3 (1936 թ. պեղումներ) և թիվ 2 (1958 թ. պեղումներ) կլոր կացարաններում[47]: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ գուրզ է հայտնաբերված նաև 1938 թ. պեղված թիվ 2 ուղղանկյուն կացարանի կենտրոնական օջախի հարևանությամբ[48]: Հատկանշական է, որ Հան Իբրահիմ Շահում օջախի հարևանությամբ հայտնաբերված է կնիք[49]:

Բնակելի կառույցների սահմաններից դուրս գտնվող սրբավայրերը:

Ա. Օժանդակ կառույցներում և տնտեսական շինություններում տեղադրված սրբավայրերը: *Նշված ժամանակաշրջանում ծիսական անկյուններ են հաստատագրված նաև օժանդակ կառույցներում, տնտեսական շինություններում և արհեստանոցներում: Այսպես, ծիսական օջախ է հայտնաբերվել Մոխրաբլուրի V շինարարական հորիզոնի թիվ 19 օժանդակ շինությունում[50]: Զոհարաններ են հայտնաբերված նաև Շենգավթի թիվ 4 կլոր կացարանին կից թիվ 13 շինությունում (արհեստանոց)՝ 1958 թ. պեղումներ[51]: Բրուտի արհեստանոցներում զոհարան-հենակներ են հայտնաբերվել Սերժեն-Յուրտում, Լոռուտում, Գառնիում (այստեղ առկա է նաև սրբազան մոխրի պահպանման համար նախատեսված անոթ): Հատկանշական է, որ Գառնիում հայտնաբերվել են հունցած կավի գնդեր, ինչպես նաև կավով լի հորեր[52]: Քարամշակման արհեստանոցներում ծիսական անկյուններ հայտնի են Շենգավթից[53]:*

Նշված տվյալները բավարար չեն վաղ բրոնզի դարում արհեստի պաշտամունքի առկայության մասին եզրակացություն կատարելու համար: Սակայն արտադրական գործունեության սրբագործման մասին առկա են որոշակի

---

[45] Н. А. С и д о р о в а. Искусство эгейского мира. М., 1972, с. 51. *Միևնույն ժամանակ չի բացառվում, որ մելոսյան անոթը ներկայացնում է ոչ թե կացարանի, այլ որևէ շտեմարանի մանրակերտ, տե՛ս նույն տեղում, էջ 31:*

[46] Э. К л е н г е л ь - Б р а н д т. *Նշվ աշխ., էջ 162:*

[47] Б. Б. П и о т р о в с к и й. Поселения медного века..., с. 172; *Ս. Ս ա ր դ ա ր յ ա ն. Հայաստանը..., էջ 280:*

[48] С. А. Е с а я н. Ереван. Ереван, 1969, с. 11.

[49] H. E r t e m. Han Ibrahim Sah.– In: Keban, 1971, p. 65.

[50] *Գ. Ա ր ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Գ. Ք ո չ ա ր յ ա ն, Հ. Օ հ ա ն յ ա ն. Հայագիտական կենտրոնի 1977–1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 205:*

[51] *Ս. Հ. Ս ա ր դ ա ր յ ա ն. Հայաստանը..., էջ 282, 285:*

[52] *Ս. Դ և ե ջ յ ա ն. Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Զորագետում. Երևան, 2001, էջ 10, Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի IV, էջ 13-14,* Р. М. М у н ч а е в. Кавказ на заре бронзового века. М., 1975, с. 343–344.

[53] *Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Լ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Շենգավթի բնակավայրի 2003 թ. պեղումները.– «Հին Հայաստանի մշակույթը», պր. XIII, էջ 58:*

տվյալներ: Այս ենթատեքստում հարկ է նշել հովվի շորերով արձանիկի գտածոն Հառիճից[54]: Արտադրական գործունեության սրբագործման մասին են հուշում ծիսական օջախների հարևանությամբ գտնված սայլերի և անիվների մոդելները: Ե. Բայբուրդյանը նշում է, որ անիվների մոդելները կարող էին օգտագործվել ընտանի կենդանիներին պահպանելու համար[55]: Նույն բանի մասին են վկայում Սերժեն-Յուրտի զոհարաններից մեկում գտնված մետաղի հալման ժամանակ օգտագործվող կավե գդալները[56]: Արհեստագործական համալիրներում ծիսական անկյունների առկայությունը վկայում է նաև արհեստավորական խավի ձևավորման մասին: Վերջինիս համար արհեստագործությունը դարձել էր հիմնական զբաղմունք, որին նվիրվում էր գրեթե ողջ օրը, և, հետևաբար, ծագում էր աշխատավայրում պաշտամունքային անկյուն ունենալու անհրաժեշտությունը՝ ծիսական կարիքները հոգալու համար:

Բ. Բնակավայրերում ոչ կենտրոնական դիրք զբաղեցնող պաշտամունքային կառույցները: *Ինչպես նշվեց, վաղ բրոնզեդարյան որոշ բնակավայրերում հանդես են գալիս կանոնավոր կառուցապատման տարրեր[57]: Որոշակի բնակավայրերում նկատվում է առանձին թաղամասերի բաժանում (Պուլուր, Կվացխելեբի, հավանաբար, Շենգավիթ)[58]: Այս պայմաններում տրամաբանական կլիներ ենթադրել, որ պետք է գոյություն ունենային թաղամասային նշանակության պաշտամունքային օբյեկտներ: Սակայն առայսօր պեղված բնակավայրերի տվյալները թույլ չեն տալիս միանշանակորեն պատասխանել այդ հարցին: Թերևս այս խմբում պետք է դիտարկել Շենգավթի թիվ 1 և 2 կլոր կացարանների միջև գտնվող թիվ 1 ուղղանկյուն շինությունը (1982 թ. պեղումներ): Այստեղ հայտնաբերվել է գլանաձև կուռք և պաշտամունքային կլոր օջախ: Հաշվի առնելով կառույցի տեղադրությունը, կարելի է ենթադրել, որ այն սպասարկում էր ոչ թե մեկ, այլ մի քանի համալիրների բնակիչների[59]: Բացառված չէ, որ նման նշանակություն ուներ Քոռուջութեփեի D փուլի LXXII հորիզոնում գտնված օջախային համալիրը, որը տեղադրված էր բակում: Ընդսմին պլատֆորմի վրա տեղադրված օջախը հավասար հեռացված էր կից տներից: Հատկանշական է, որ հաջորդ LXXIII-LXXIV հորիզոններում բակի տարածքը ոչ միայն սալահատակվում է, այլև ծածկվում է կտուրով: Բացառված չէ, որ պաշտամունքային նշանակություն ունեին և կից շինությունները, որտեղ հաստատագրված է երկուական պաշտամունքային օջախ[60]: Կացարանների սահմաններից դուրս են գտնվում*

---

[54] С. А. Е с а я н. Скульптура…, таб. 1 (5).

[55] Е. Б а й б у р т я н. Последовательность…, с. 52.

[56] *Տես՝* В. И. К о з е н к о в а, Е. И. К р у п н о в. Исследования Сержень-Юртовского поселения в 1962 г.– КСИА, вып. 98, с 74.

[57] Р. С. Б а д а л я н. Раннебронзовая культура Ширака.– Автореферат дис. канд. ист. наук, Ереван, 1986, с. 7.

[58] H. K o s a y. Pulur (Sakyol) Excavations.– In: Keban, 1969, Ankara 1971, p. 104; А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 117, *Ս. Հ. Ս ա ր դ ա ր յ ա ն. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան, 1967 (Շենգավթի հատակագիծը):*

[59] *Ս. Հ. Ս ա ր դ ա ր յ ա ն. Հայաստանը..., էջ 295:*

[60] A. G. S a g o n a. *Նշվ. աշխ., էջ 75,* A. S c h a c h n e r. *Նշվ. աշխ., էջ 121:*

նաև Օզնիի և Թեթրի Ծղարոյի սրբավայրերը: Օզնիի համալիրները ներկայացված են զոհարաններով և օջախներով, իսկ Թեթրի Ծղարոյում հաստատագրված են գետաքարերով սալահատակված հատուկ հրապարակներ, որոնք, ամենայն հավանականությամբ, հանդիսանում էին Արևի և Լուսնի պաշտամունքի վայրեր[61]*: Ըստ երևույթին ոչ կենտրոնական դիրք էին զբաղեցնում նաև Սերժեն-Յուրտի սրբավայրերը: Հատկանշական է, որ դրանցից մեկը ժամանակին այլ կառույցներից առանձնացված էր պատով*[62]*: Մեկ այլ զոհարան կազմված է իրար կողքի դրված խոզի ծնոտներից*[63]*: Բնակավայրում ոչ կենտրոնական դիրք են զբաղեցնում նաև Պուլուրի X հորիզոնի թիվ 79, 80 և 83 կացարանները, որոնց անկյուններում տեղադրված են ցայտուն մարդակերպ քանդակներ*[64]*: Ծիսական կառույցների այս խմբում պետք է հիշատակել նաև Ամիրանիս-Գորայի «երկար տները»: Վերջիններիս գործառական նշանակությունը դեռևս պարզ չէ, սակայն օջախների և հորերի բացակայությունն այդ շինություններում (միայն VIII կառույցում է բացված մոգարի սերմերի պահպանման համար նախատեսված հոր) հիմք են տվել Տ. Չուբինիշվիլուն բացառել դրանց օգտագործումը որպես կացարան կամ արտադրական կառույց: «Երկար տներից» մեկում (XXVII կացարան) հայտնաբերվել է կրակի ներգործության հետքեր կրող եռապատ կերտվածք, որը, ըստ Տ. Չուբինիշվիլու, զոհարան էր*[65]*: Կացարաններից դուրս օջախներ են հայտնաբերվել նաև այլ բնակավայրերում. Դեղիրմենթեփեի I հորիզոնի թիվ 2,3,5 Հան Իբրահիմ Շահի III հորիզոնի թիվ 5, VIII հորիզոնի թիվ 7-8, Պուլուրի IX հորիզոնի թիվ 27, VIII հորիզոնի թիվ 30-32, Սեմսիյեթեփեի թիվ 1 և 2 կացարաններում, Թել Ջուդայիդահում*[66]*: Նշված բնակավայրերում օջախները գտնվում են կացարանների բակերում, հետևաբար, պետք է դիտարկվեն ընտանեկան պաշտամունքի համատեքստում:*

Գ) Համայնական նշանակության սրբավայրեր: *Սրբավայրերի հաջորդ խումբը համայնական նշանակության սրբավայրերն են: Տվյալ սրբավայրի համայնական նշանակությանը կարող էր ընդգծվել պաշտամունքային կառույցի զատմամբ այլ կառույցների զանգվածից, ինչպես նաև ուրույն ճարտարապետությամբ: Պաշտամունքային կառույցի զատումը կարող էր իրականացվել օգտագործելով տեղանքի առանձնահատկությունները: Այսպես, Ամիրանիս-Գորայի պաշտամունքային համալիրը տեղադրված է բնակատեղիի սահմաններից*

---

[61] Т. Ч у б и н и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 50, 79; Г. Г о б е д ж и ш в и л и. Селище Тетри-Цкаро. Тбилиси, 1978, с. 20.

[62] В. И. К о з е н к о в а, Е. И. К р у п н о в. *Նշվ. աշխ.:*

[63] А. А. И е р у с а л и м с к а я, В. И. К о з е н к о в а, Е. И. К р у п н о в. Древние поселения у с. Сержень-Юрт в Чечено-Ингушетии.– КСИА, вып. 94, М., 1963, с. 44.

[64] A. G. S a g o n a. *Նշվ. աշխ., էջ 70: Ա. Սագոնան քիչ հավանական է համարում, որ նշված կառույցներն ունեին պաշտամունքային նշանակություն, քանի որ դրանք իրենց ճարտարապետական հորինվածքով չեն տարբերվում այլ կառույցներից, սակայն ուրույն ճարտարապետությունը վաղ բրոնզի դարաշրջանում պարտադիր հատկանիշ չէ պաշտամունքային կառույցի համար:*

[65] Т. Ч у б и н и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 50:

[66] A. S c h a c h n e r. *Նշվ. աշխ., էջ 121, 142, 181:*

դուրս՝ Ամիրանիս լեռան արևմտյան գագաթին[67]: Բնակավայրի ամենաբարձր հատվածում էր տեղադրված նաև Ագարակի պաշտամունքային համալիրը[68]: Իր տեղադրությամբ բնակատեղիից զատվում էր նաև Ալի Բայրամալիի «հասարակական կառույցը»: Այն տեղադրված էր բլրի գագաթին, այն ժամանակ, երբ կացարանները տեղադրվում էին լանջերին[69]: Բնակավայրում մեկուսացված դիրք էր զբաղեցնում նաև Կվացխելեբիի թիվ 1 պաշտամունքային կառույցը: Այն գտնվում էր բնակավայրի բարձրադիր հյուսիսարևմտյան հատվածում, հրապարակի կենտրոնում[70]: Բնակավայրից որոշակի հեռավորության վրա է գտնվում նաև Ախալի Ժինվալիի պաշտամունքային կառույցը, որը գտնվում էր Արագվի գետի ձախ ափին, այն ժամանակ, երբ բնակատեղին տեղադրված էր աջ ափին[71]: Փաստորեն, տեղանքի հատվածի ներգրավումը պաշտամունքային համալիրի մեջ առկա է նաև Քոսի ճոթերում, որտեղ սրբազան ածխի պահպանման հորերը տեղադրված են բնակատեղիի տարածքում հոսող առվի աջ և ձախ կողմերում: Հորերի ծիսական բնույթը ապացուցվում է այն փաստով, որ այնտեղ զուգորդվում էին մոխիրը և ծիսական օջախների բեկորները[72]: Նմանատիպ հորեր հայտնաբերվել են նաև Նորաբաց բնակավայրում, սակայն Գ. Արեշյանը, Ս. Դևեջյանը և Հ. Իսրայելյանը գտնում են, որ դրանք կապված են անդրաշխարհի պաշտամունքի հետ[73]: Տեղանքն օգտագործված էր նաև Մեծամորում, որտեղ պարզունակ աստղադիտարանը տեղադրված էր միջնաբերդի առջևի հարթավայրում[74]: Ե. Բայբուրդյանը չի բացառում, որ Շենգավթի ծիսական կառույցը տեղադրված էր բլրի գագաթին: Դատելով նկարագրությունից, հեղինակը նկատի ունի ներկայումս հիվանդանոցի զբաղեցրած տարածքը[75]: Այն դեպքերում, երբ հնարավորություն չկար օգտագործել տեղանքի առանձնահատկությունները, սրբավայրը զատվում էր շրջակա տներից բաց հրապարակով: Այս հնարքը կիրառվել էր Մոխրաբլուրի սրբավայրի կառուցման ժամանակ[76]: Այլ կառույցներից որոշակիորեն զատվում է նաև Ցիխիա-Գորայի B1 հորիզոնի թիվ 1 շի-

---

[67] Т. Ч у б и н и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 72:

[68] П. А в е т и с я н. Предварительные результаты раскопок памятника Агарак.– “Археология, этнология и фольклористика Кавказа”, с. 254.

[69] Г. С. И с м а и л о в, О. А. Д а н и е л я н. Археологические работы Физулинского отряда в 1976 г.– Археологические и этнографические исследования в Азербайджане (1976), Баку, 1979, с. 4-5.

[70] А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 118:

[71] М. Г. Г л о н т и. Памятники Арагвского ущелья раннебронзовой эпохи.– Душетская научная конференция, посвященная проблеме взаимоотношения между горными и равнинными регионами. Тбилиси, 1984, с. 37-38.

[72] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Հայկական լեռնաշխարհի մշակույթը..., էջ 22:*

[73] *Գ. Ա ր ե շ յ ա ն, Ս. Դ և ե ջ յ ա ն, Հ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Հուշարձանների պեղումներ Նորաբաց և Ներքին Չարբախ գյուղերի միջև.– «ՀՍՍՀ-ում 1979-1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ» (այսուհետ՝ Թեզիսներ), Երևան, 1981, էջ 26:*

[74] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Մեծամորի պեղումների արդյունքները .– Թեզիսներ 1987-1988, Երևան, 1989, էջ 4:*

[75] Е. А. Б а й б у р т я н. Последовательность..., с. 65.

[76] Г. Е. А р е ш я н. Искусство..., с. 8.

նությունը, որը, ի տարբերություն այլ կառույցների, ճակտոնային մասով ուղղված է դեպի փողոց[77]:

Համայնական նշանակություն ունեցող պաշտամունքային կառույցների հատկանշական գծերից է դրանց համալիր բնույթը: Դրանք ընդգրկում էին ոչ միայն բուն կառույցը, այլև կից կառույցներ ու կերտվածքներ: Այսպես, Ամիրանիս-Գորայում համալիրը բաղկացած էր մի քանի կառույցներից, ինչպես նաև դեպի համալիրը տանող ժայռափոր անցուղուց[78]: Ալի Բայրամալիի «հասարակական կառույցը» շրջապատող ժայռային ելուստները զարդարված են ժայռապատկերներով[79]:

Շենգավթյան մշակույթի պաշտամունքային համալիրների թվում բացառիկ տեղ է զբաղեցնում Ագարակի ծիսական համալիրը: Այն իրենից ներկայացնում է Ամբերդ գետի երկայնքով տուֆե մերկացումներում և ելուստներում փորված մի համալիր: Քարե ելուստները, բլուրները և հարթակները կրում են մշակման հետքեր: Ժայռերի ճակատային մասերը նույնպես մշակված են: Առկա են ժայռերում փորված խորշեր, ինչպես նաև դեպի այդ խորշերը տանող աստիճաններ: Բացվեցին նաև կլորավուն, սեղանաձև, եռաստիճան զոհարաններ և դրանք միացնող առուներ[80]: Ամենայն հավանականությամբ, ծիսական բնույթի արարողություններ էին իրականացվում նաև ժայռապատկերների մոտ[81]:

Մոխրաբլուրի պաշտամունքային կառույցի մերձակայքում հայտնաբերվել են ծիսական հորեր՝ զոհաբերության ածխի պահպանման համար[82]: Հատկանշական է, որ պաշտամունքային որոշ կառույցներում, ամենայն հավանականությամբ, զուգորդվում էին փակ կառույցում կատարվող և բացօթյա արարողությունները: Սրբազան մոխրի պահպանման հորեր են հայտնաբերվել նաև Ժինվալիի պաշտամունքային կառույցի հարևանությամբ, ընդ որում, տարածքն ունեցել է նաև ծածկ: Հայտնաբերվել են նաև բացօթյա զոհարաններ[83]: Քիրբեթ Քերակի պաշտամունքային համալիրն ընդգրկում էր մի քանի շինություն, որոնց մի մասը հաղորդակցվում էր կենտրոնական ուղղանկյուն կառույցի հետ: Բացօթյա օջախ է հայտնաբերվել նաև Կվացխելերիի պաշտամունքային կա-

---

[77] З. Э. М а х а р а д з е. Поселение Цихиагора..., с. 73.

[78] Т. Ч у б и н и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 72:

[79] Г. С. И с м а и л о в, О. А. Д а н и е л я н. *Նշվ. աշխ., էջ* 4-5:

[80] П. А в е т и с я н. *Նշվ. աշխ., էջ 256:*

[81] *Հ. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, Հ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն. Գեղամա լեռների ժայռապատկերները. Երևան, 1971, էջ 25:*

[82] А. Е. С и м о н я н, А. В. Г н у н и. Культовые сооружения Армянского нагорья и их эволюционное развитие в 8 тыс. до н. э. – 9 в. до н. э.– Эрмитажные чтения памяти Б. Б. Пиотровсого, СПб., 1998, с. 82.

[83] Р. М. Р а м и ш в и л и, Г. Г. Р ч е у л и ш в и л и, М. Г. М а р г е л а ш в и л и, В. В. Ч е х л а д з е, М. Г. Г л о н т и, Д. К. Ц и к л а у р и, Ц. Ш. Р а б а к и д з е, И. Ф. Ц и к л а у р и, К. Б. Ц е р е т е л и, Г. Ч. Ч и к о в а н и. Основные результаты работ Жинвальской экспедиции.– ПАИ, 1980, Тбилиси, 1982, с. 52-53.

ռույցին կից[84]: Բաց բակը, որտեղ երբեմն տեղադրված էր լինում զոհարան, մերձավորարևելյան տաճարաշինության հատկանշական գծերից է[85]:

Հատկանշական է նաև, որ շենգավթյան մշակույթի սրբավայրերը գոյատևել են բավական երկար ժամանակ: Անհրաժեշտության դեպքում սրբավայրը վերանորոգվում էր կամ վերակառուցվում, սակայն նոր տեղ չէր տեղափոխվում: Այսպես, նույն վայրում բավականաչափ երկար են գոյատևել Զրահովտի, Ժինվալիի, Մեգիդոյի, Քոռուջութեփեի սրբավայրերը: Այս հատկանիշը համարվում է մերձավորարևելյան տաճարի հատկանշական գծերից մեկը[86]:

Վաղ բրոնզի ժամանակաշրջանում սրբավայրերի հաջորդ հատկանշական գծերից է ճարտարապետական ուրույն հորինվածքը: Ընդ որում, ծեսը կարող էր իրականացվել ինչպես սենյակներում, այնպես էլ աշտարականման բացօթյա կառույցներում: Վերջիններիս թվին է պատկանում Մոխրաբլուրի տաճարը՝ կառուցված սև տուֆի հղկված քարերից, որոնց վրա դրված էր չորսմետրանոց բազալտե սյունը: Հատկանշական է, որ տաճարի կավածեփի մեջ ներդրված էին փայլարի բեկորներ, ինչն ուժեղացնում էր կառույցի ընկալումը[87]: Աշտարակատիպ կառույց, որի գագաթին տեղադրված էր շարժական օջախ, հաստատագրված է նաև Զրահովտի տաճարական համալիրում: Աշտարակն օղակված էր 7–8 մ տրամագծով իրար մեջ հագած շրջանաձև երեք կառույցներով[88]: Գլանաձև տեսք ուներ նաև Մեգիդոյի XVII և XVI հորիզոններում գոյություն ունեցած պաշտամունքային կառույցը, ընդ որում, շինության հակառակ կողմից առկա էին դեպի վեր տանող աստիճաններ[89]: Ծեսը բացօթյա էր իրականացվում նաև Մեծամորի զիկուրատանման պաշտամունքային կառույցում[90]:

Բացօթյա սրբավայրերի հետ մեկտեղ պաշտամունքը կարող էր իրականացվել և փակ կառույցներում: Այդպիսի կառույցների թվում հարկ է նշել Քիրբեթ Քերակի, Այի, Սեմսիեթեփեի պաշտամունքային կառույցները, ինչպես նաև Ալի Բայրամալիի «հասարակական շինությունը»[91]: Նշված կառույցներն իրենց հատակագծով որոշակիորեն տարբերվում են բնակելի կառույցներից: Միևնույն ժամանակ նշված ժամանակաշրջանում շարունակում են գոյատևել իրենց ճարտարապետությամբ բնակելի կառույցների ճարտարապետությունը կրկնող պաշտամունքային կառույցները: Այսպես, Ամիրանիս Գորայի պաշտամունքա-

---

[84] К. Х. К у ш н а р е в а. *Նշվ. աշխ., էջ* 218:

[85] Ранняя древность, с. 114.

[86] *Նույն տեղում:*

[87] Г. Е. А р е ш я н. Искусство..., с. 8; А. Е. С и м о н я н, А. В. Г н у н и. Культовые сооружения..., с. 82.

[88] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Զրահովտի պեղումների արդյունքները.– Թեզիսներ. 1989-1990, Երևան, 1991, էջ 11, Ն ո ւ յ ն ի. Զրահովիտ.– «Հայաստանի հնագույն մշակույթը», պր. 3, էջ 14, նկ. 2:*

[89] Oriental Institute Communications. Chicago, 1991, p. 44; W. F. A l b r i g h t. Review on “Megiddo II”.– “American Journal of Archaeology”, vol. 53, №2, Washington, 1949, p. 215.

[90] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Մեծամորի պեղումների արդյունքները , էջ 4:*

[91] А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 118; Г. С. И с м а и л о в, О. А. Д а н и е л я н. *Նշվ. աշխ., էջ* 4-5, A. G. S a g o n a. *Նշվ. աշխ., էջ 82,* J. C a l l o w a y. New Perspectives on Early Bronze III in Cannan.– “Archaeology in the Levant”, Werminster, 1978, p. 54.

յին նշանակություն ունեցող XV և XVI կառույցներն իրենց ճարտարապետությամբ չեն տարբերվում բնակավայրի կացարաններից[92]: Բնակելի համալիրներին հար և նման էր նաև Ցիխիա-Գորայի թիվ 1 կառույցը[93]: Իր հատակագծով բնակելի կացարաններից գրեթե չի տարբերվում Կվացխելերիի թիվ 1 կացարանը: Այն աչքի է ընկնում խիստ կլորացված անկյուններով: Կվացխելերիի հատակագիծը, փաստորեն, կրկնում է նմանօրինակ ճարտարապետությամբ բնորոշվող տարածաշրջանի բնակավայրերի առավել վաղ թվագրվող շինարարական հորիզոնների ճարտարապետությունը (օրինակ՝ Խիզաննանթ-Գորայի E հորիզոնը): Կվացխելերիի թիվ 1 կացարանում բացակայում է նաև նախամուտքը, որը հատուկ է բնակավայրի բնակելի կացարաններին[94]: Այսպիսով, Կվացխելերիում, փաստորեն, առկա է ճարտարապետական ուրույն հորինվածքի ձևավորում:

Պաշտամունքային կառույցների ծիսական հարդարանքը հիմնականում համապատասխանում է բնակարանային համալիրների ծիսական հարդարանքին (օջախներ, զոհարաններ և այլն), սակայն մի շարք տվյալներ վկայում են ծեսի բարդացման մասին: Այսպես, Մոխրաբլուրի տաճարի գտածոները վկայում են կանացի, տղամարդու սկիզբը, ինչպես նաև ժառանգներին մարմնավորող եռամաս աստվածության պատկերացումների զարգացման մասին, որոնք ներկայացված են երեք կավե արձանիկներով[95]: Ժինվալիի սրբավայրում հայտնաբերվել է կենդանա-մարդակերպ արձանիկ[96]: Նման կուռքերն, ըստ Ա. Պերշիցի, կարող էին հանդիսանալ տվյալ ցեղի հովանավորներ[97]: Ծեսի բարդացման մասին է վկայում նաև կառույցների ներքին բարդ հարդարանքը: Այսպես, Ժինվալում կուռքը դրված էր պատվանդանի վրա, իսկ դրա շուրջը՝ զոհաբերությունների հետքեր էին: Գուդաբերտղայում ծիսական կառույցի պատերը զարդարված էին բազմաթիվ որմնանկարներով, իսկ հատակին պահպանվել էին բազմաթիվ ծիսական առարկաներ (դիմակներ) և զոհաբերության հետքեր (ցլի գանգեր): Կվացխելերիում սենյակի կենտրոնում տեղադրված էր դեպի մուտքը կողմնորոշված ծիսական օջախ, որը կիսով չափ լցված էր մոխրով և այրված ոսկորներով: Կացարանի արևմտյան կողմում տեղադրված էր 10–15 սմ բարձրությամբ և 80 սմ լայնությամբ հարթակ, որի ճակտոնային մասում՝ հիմքին զուգահեռ անցկացված էր կարմիր գիծ: Կենտրոնական օջախի կողքը ցլի ամբողջական կմախք էր, որի կոնքոսկրի մոտ հայտնաբերվեց բրոնզե նետասլաք[98]: Միևնույն ժամանակ հատկանշական է սրբավայրերի ճնշող մեծամասնության համեմատաբար համեստ տեսքը: Նման երևույթը դիտարկվում է նաև Հունաստանում մ. թ. ա. III և II հազ. հուշարձաններում: Ըստ Տ. Բլավատսկայայի, դա

---

[92] Т. Ч у б и н и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 72:

[93] З. Э. М а х а р а д з е. Поселение Цихиагора..., с. 73.

[94] А. И. Д ж а в а х и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 118, 177:

[95] А. Е. С и м о н я н, А. В. Г н у н и. *Նշվ. աշխ., էջ* 83:

[96] М. Г. Г л о н т и. Памятники…, с. 38.

[97] История первобытного общества. Т. 3. Эпоха классообразования, с. 427.

[98] К. Х. К у ш н а р е в а. *Նշվ. աշխ., էջ* 165, 218:

վկայում է ոչ միայն հին աստվածների ծեսի պահպանման մասին, այլև արտացոլում է աստվածությունների հասանելությունը երկրպագուների համար[99]:

Բերված տվյալները բավարար են հանգելու այն եզրակացության, որ վաղ բրոնզի ժամանակաշրջանի պաշտամունքային որոշ կառույցներ ձեռք են բերում տաճարի հատկանշական գծեր (ուրույն ճարտարապետություն, որն անպիտան է դարձնում տվյալ կառույցը բնակեցման համար, կենտրոնական տեղ բնակավայրում, համալիրային բնույթ)[100]:

Առանձին տվյալներ վկայում են նաև պաշտամունքային համալիրներում ծավալվող տնտեսական գործունեության մասին: Այսպես, Քիրբեթ Քերակի համալիրն ընդգրկում էր կլոր հատակագծով 9 շինություն, որոնք, ամենայն հավանականությամբ, հանդիսանում էին շտեմարաններ[101]: Յորենի առկայությունը ծիսական համալիրում կարող է ունենալ մի շարք մեկնաբանություններ: Նախ՝ դա կարող է կապված լինել սրբավայրի տնտեսական գործունեության հետ: Այն կարող էր հանդիսանալ նվիրատվություն: Վերջապես, ցորենը կարող էր ի պահ տրվել սրբավայրին, որպեսզի ապահովվեր բերքի պահպանվածությունը և ծիսական մաքրությունը: Վերլուծելով միջագետքյան քաղաքակրթությունների զարգացման օրինաչափությունները, Ի. Դյակոնովը նշում է, որ տաճարը հանդիսանում էր տվյալ քաղաքի կամ շրջանի բնամթերքի պահուստային ֆոնդի հիմնական պահապանը: Տնտեսական գործունեության ծավալումը տաճարի կարևորագույն գործառույթներից է համարում նաև Ռ. Մաք Ադամսը[102]: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Քիրբեթ Քերակի օրինակը չի կարող բնորոշիչ լինել շենգավթյան ողջ մշակույթի համար, քանի որ, գտնվելով մշակութային տիրույթի ծայրամասում, այն մեծապես ներազդվում էր այլ՝ մասնավորապես եգիպտական քաղաքակրթությունից: Սրբավայրի կողմից իրականացվող արտադրական գործունեության մասին են վկայում նաև Ժինվալիի պեղումները, որտեղ սրբավայրին կից հայտնաբերվել է ծիսական նշանակության խեցեղենի թրծման համար նախատեսված հոր[103]:

Ծեսի և պաշտամունքային կառույցների հատակագծի բարդացումը, սրբավայրերում արտադրական գործունեության մասին տվյալները բերում են այն եզրակացության, որ վաղ բրոնզի ժամանակաշրջանում ձևավորվում է այդ համալիրները սպասարկող խավ: Սակայն քրմական դասի առաջացման մասին վկայող ուղղակի տեղեկություններ չկան: Մ. Գլոնտիի կողմից հիշատակվող «քրմուհուն» պատկանող կացարանը, որտեղ հայտնաբերվել են 19 ամբողջական և 50 բեկորային կավանոթ, այդ թվում նաև կարմիր ներկով, ցորենի և գարու մնացորդներով լցված, ինչպես նաև կնիք, իրականում կարող էր պատկանել սոցիալական և ունեցվածքային բարձր դիրք զբաղեցնող ցանկացած անձ-

---

[99] Т. В. Б л а в а т с к а я. Греческое общество II тыс. до н. э. и его культура. М., 1976, с. 153.

[100] История первобытного общества. Т. 3. Эпоха классообразования, с. 427.

[101] A. G. S a g o n a. *Նշվ. աշխ., էջ 82:*

[102] Ранняя древность, с. 58-59 (*գրքի տվյալ գլուխը գրել է Ի. Դյակոնովը*): R. M c A d a m s. The Evolution of Urban Society. London, 1965, p. 124-126.

[103] Р. М. Р а м и ш в и л и, Г. Г. Р ч е у л и ш в и л и и др. Основные результаты работ Жинвальской экспедиции.– ПАИ, 1980, Тбилиси, 1982, с. 52–53.

նավորության[104]: Ըստ Կ. Քուշնարյովայի, քրմական դասի ներկայացուցիչներին են պատկանում Կվացիելերիի թիվ 2 թաղումը (հայտնաբերվել է եղջերուի, արագիլի և աստղանշանների պատկերներով ճակատակալ, պարուրաձև ապարանջաններ, ինչպես նաև բրոնզե ու սերդոլիկե ուլունքաշարեր), Սամշվիլդեի դամբարաններից մեկը (հայտնաբերվել է վանակատի ներդրված բեկորներով անոթ՝ զարդարված արագիլի և աստրալ պատկերներով ու շքասեղ) և Ամիրանիս-Գորայի թիվ 36 դամբարանի թաղումը (հայտնաբերվել են օձի, արագիլի և զոհարանի պատկերով անոթ ու դաշույն)[105]: Սակայն նման գույք կարող էր դրվել յուրաքանչյուր ծիսարարի, այլ ոչ միայն քրմի հետ: Ա. Պերշիցի կարծիքով, քրմական դասի բնորոշ գծերից է ծեսի մասնագիտացումը, ծեսը սպասարկողների նեղ մասնագիտացումը և շերտավորումն ըստ աստիճանների[106]: Ի. Դյակոնովը գտնում է, որ քրմական դասը վերահսկում էր ոռոգման համակարգերի կառուցումը: Ինչպես հայտնի է, նման կառույցներ են հայտնաբերվել, մասնավորապես, Մոխրաբլուրում[107]:

Բաց է մնում նաև ընդհանուր բնակավայրերի սրբայնացման հարցը: Թեպետ համայնական սրբավայրերի կենտրոնական դիրքը վկայում է, որ համայնքը գիտակցում էր իր միասնականությունը, սակայն գոյություն ունեցող տվյալները թույլ չեն տալիս խոսել բնակավայրի՝ որպես պաշտամունքային միասնության ընկալման մասին: Նման երևույթի մասին կարող էին միայն վկայել ծեսի առարկաների գտածոները բնակավայրի սահմաններում (պարիսպ, դարպասներ): Միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել Ջ. Ռիքվերտի կարծիքը, ըստ որի բնակավայրի սակրալիզացիայի մասին է հուշում սրբավայրն օղակող կենտրոնական հրապարակի առկայությունը[108]:

Վաղ բրոնզի դարի բնակավայրերի թվում կարելի է գատել որոշակի գավառական կենտրոններ հանդիսացող բնակատեղիները. Էլառ, Ղարաքյոփեկթեփե, Մեծամոր, Մոխրաբլուր և այլն: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ այս բնակավայրերի սրբավայրերը պետք է ունենային ոչ միայն ներհամայնական, այլև միջհամայնական նշանակություն:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է հանգել մի շարք եզրակացությունների: Ա) Մ. թ. ա. IV–III հազ. կուր-արաքսյան մշակույթի բնակավայրերում ձևավորվում է պաշտամունքային կառույցների համակարգ, որն ընդգրկում է կացարաններում տեղադրված սրբազան անկյունները, նահապետական մեծ ընտանիքի ընդհանուր սրբավայր-կացարանի մի քանի բնակարանային համալիրներ սպասարկող սրբավայրեր (չի բացառվում նաև թաղամասային նշանակության), ընդհանուր համայնական նշանակության սրբավայրեր: Բացառված չէ, որ ձևավորվում են մի քանի բնակավայրեր սպասարկող սրբավայրեր: Բ) Բնակարանային համալիրներում գտնվող ծիսական անկյունների, բնա-

---

[104] М. Г. Г л о н т и. Памятники, с. 35.

[105] К. Х. К у ш н а р е в а. *Նշվ. աշխ., էջ* 271, Т. Н. Ч у б и н и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 69, Г. И. М и р ц х у л а в а. Самшвилде, с. 76.

[106] История первобытного общества. Т. 3. Эпоха классообразования, с. 427-428.

[107] Ранняя древность, с. 39.

[108] J. R y k w e r t. The Idea of a Town, p. 73.

կավայրերի ծիսական հարդարանքի և կացարաններում կատարված թաղումների քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ կացարանն ամբողջությամբ ընկալվում էր որպես սրբագործված տարածք: Գ) Զնավորվում են ուրույն ճարտարապետությամբ բնորոշվող սրբավայրեր, որոնք կից կառույցների հետ հաճախ կազմում են տաճարական համալիրներ: Դ) Ծեսի և ծիսական կառույցների ճարտարապետության բարդացումը վկայում է սրբավայրերը սպասարկող խավի առաջացման մասին: Ե) Նշված ժամանակաշրջանում սրբազան անկյուններ հաստատագրվում են նաև տնտեսական բնույթի կառույցներում և արհեստանոցներում, ինչը վկայում է արհեստագործական խավի առաջացման մասին: Բացառված չէ, որ նշված ժամանակաշրջանում հանդես են գալիս արտադրական գործունեության սրբագործման տարրեր:

СВЯТИЛИЩА И КУЛЬТОВЫЕ СООРУЖЕНИЯ, РАСПОЛОЖЕННЫЕ В ПОСЕЛЕНИЯХ ШЕНГАВИТСКОЙ КУЛЬТУРЫ

АРТАК ГНУНИ

Р е з ю м е

В поселениях шенгавитской культуры (IV–III тыс. до н. э.) особое место занимают культовые сооружения и святилища. На основе их анализа можно прийти к выводу о существовании в периоде ранней бронзы иерархии культовых сооружений: а) культовые углы, расположенные в жилых помещениях, б) культовые центры большой патриархальной семьи, в) святилища, имеющие нецентральное расположение в поселении, а также культовые углы в хозяйственных и производственных помещениях, г) общинные культовые сооружения. Наблюдаются следы сакрализации жилища и поселения, идет процесс формирования храмовых сооружений.

SANCTUARIES AND CULT BUILDINGS LOCATED IN THE SETTLEMENTS OF SHENGAVIT CULTURE

ARTAK GNUNI

S u m m a r y

Sanctuaries and cult buildings take a particular place in the settlements of Shengavit Culture (IV-III mil. B.C.). Basing on the analysis of these sanctuaries, it is possible to distinguish some types of cult structures: a) cult corners in the living houses, b) cult centers of the great patriarchal family, c) non-central sanctuaries in the settlement, as well as cult corners in the economical lodgings and workshops, d) community cult centers. Some signs of the sacralization of living house and settlement and the formation of temples are observed.